գեղապանծն Փրանսայու, անհիմն բանիւ շարայարեալ արդ տալ եառուն առ տէրութիւնն Օսմանեան, և ձանձրացուցեալ զպատուական գլուխ նորա, առեալ բերին 'ի նմանէ քակելոյ հրովարտակ, զոր 'ի Սեպտեմբերի 11 ընթեանք, ձեռօք իւրեանց հանդերձ հասարակ ժողովրդովք Լատին և Յոյն ազգաց, խառն բազմութեամբ յարձակեալ 'ի լեառն Ս. Համբարձման 'ի վերայ սեղանոյն և ամենայն նորոգ քարուկիր շինուածոց մերոց քակեցին ցիր և ցան արարեալ դքարինն 'ի մէջ երկուց աւուրց՝ կացուցին զամենայն հիմնայատակ ։ Ընդ էր տեսանել և լսել նախատինս և հայհոյանս Լուսաւորչեաց և 'ի Հրէից, որք ատէին յերեսս նոցա անգամ յոլովք 'ի բազմաց հայեցողաց. Հայք զանեղին Աստուծոյ իւրեանց շինեցին 'ի փառս սուրբ անուան նորա, դուք Յոյն և Լատին կործանեցէք աւերեցէք և փլուցէք որպէս կռատուն, և այն և այն ։ Զորս չէ արժան 'ի բերան գրչի առնուլ 'ի ձանձրութիւն պատուարժան լսելեաց Սրբազնութեանդ ։

Այսպէս 'ի բազմաց անցից անցելոց զգուշացուցեալս գրեցաք առ Վեհութիւնդ 'ի գիտութիւն եւ 'ի ճշմարիտ տեղեկութիւն, որպէս զի մի յայդ կողմանդ՝ Յոյնք կամ Լատինք պատրեալ 'ի ստայօդ գրութեանց բանից ոմանց ոմանց Յոյն և Լատին կործանողաց այսր Երուսաղէմ եղելոց, եկեալ զպատրեսցեն զմիաբանութիւն հայազգի Ս. Յակոբայ առաջի Վեհութեանդ և ազգի իւրեանց վեհից և մեծաց, համարելով զմեզ իբրեւ պարտաւոր և եղբայրատեաց, որ չէ այնպէս, այլ ճշմարիտ եղեալ պատմութիւնն այս էր՝ զոր գրեցաք, որոց ամենեցուն Տէր տացէ բարին փոխան անօրինակ և անիրաւ արարեալ չարութեանց նախանձու իւրեանց, զոր լուցին ամենայն հոգւով յերկուց ամաց անտի անխնայ աշխատելով, և մեք յոյս մեր յԱստուած եդեալ և ապաւինեալ 'ի մաքուր մաղթանս սրբոյ Լուսաւորչին մերոյ, խնդրեմք զսուրբ օրհնութիւնդ և զօրհնաձիր պատասխանագրութիւն քո մեզ մխիթար սրտի, որ բոլոր միաբանութեամբ բաս Երեմիայի մարգարէին ողբս 'ի բերան, զայս 'ի յարտասուս ունելով աղաչեմք զԱստուած բարձրեալն և ամենամարդասէր, նոցա ներել և մեզ ողորմել ։ Ողջ լեր, ո՛վ գորովագութ Հայր Սրբութեան, 'ի պայծառութիւն սուրբ և 'ի մխիթարութիւն Աթոռայնոցս ամենեցուն ։

1839, Սեպտեմ. 23. Երուսաղէմ։

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԴՊՐՈՑ Ի ԿԻՊՐՈՍ

Կիպրոսի Վարդանանց Դպրոցի աշակերտաց հարցաքննութիւնն կատարուած է 'ի 12 Փետրուարի 'ի ներկայութեան տեղւոյն Մեծա. Ազգայնոց ։ Այս մասին, ինչպէս Մեծ. անդամք Հոգաբարձութեան, նոյնպէս և այլ ականատես անձինք իրենց ստորագրութեամբ գոհութիւն կը յայտնեն թէ՛ աշակերտաց յառաջադիմութեան և թէ՛ Ս. Աթոռոյս միաբան Արժա. Վարդան վարդապետի ուսուցչական աշխատութեան և հսկողութեան համար ։ Մենք եւս ուրախութեամբ սրտի հրատարակելով այն բերկրառիթ տեղեկութիւնն, քաջայոյս եմք, որ ինչպէս Մեծ. Հոգաբարձութիւնն, նոյնպէս և Արժ. Վարդապետն բարեջան աջակցութեամբ կը բազմապատկեն իրենց աշխատանքն յիշեալ դպրոցի յարատեւ յառաջադիմութեան համար, որով բարի անուն կը ժառանգեն և մեծ ծառայութիւն կը մատուցանեն Ազգին ։

digitised by A.R.A.R.@